# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԻՐԻՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Իրինդ համայնք

ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Իրինդ, հեռ՝ 098-34-39-09, irind.aragatsotn@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 30

### ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԻՐԻՆԴԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆՈ 8 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջով, համայնքի ավագանին

ՈՐՈՇԵՑ՝

Հաստատել Իրինդի ավագանու նո 8 նիստի օրակարգը՝

1. Իրինդ համայնքի 2020 թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին

2. Համայնքի ղեկավարի աշխատավարձի պաշտոնային դրույքաչափը հաստատելու մասին

3. Համայնքապետարանի աշխատակազմի աշխատավարձի պաշտոնային դրույքաչափերը սահմանելու մասին

4. Տեղական տուրքերի և տեղական վճարների դրույքաչափերը սահմանելու մասին

5. Համայնքի տարածքում աղբահանություն կազմակերպելու մասին

6. Համայնքի ֆոնդային բյուջեից կատարվելիք ծախսերը հաստատելու մասին

7. Իրինդ համայնքի սոցիալական աջակցության կամավոր խնդիրների չափորոշիչների մասին

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀԱՅԿ

ՄԻՆԱՍՅԱՆ ԱՇՈՏ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՎԱՀԱԳՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԲԱՐՍԵՂ ՀԵԲՈՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԻՐԻՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ


Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Իրինդ համայնք

ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Իրինդ, հեռ՝ 098-34-39-09, irind.aragatsotn@mta.gov.am


## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 31

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԻՐԻՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը և ղեկավարվելով ՀՀ <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով ու <<Բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 32-րդ հոդվածով, Իրինդ համայնքի ավագանին

ՈՐՈՇԵՑ՝

Հաստատել Իրինդ համայնքի 2020 թվականի բյուջեն համաձայն կից հավելված 1-ի:

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀԱՅԿ

ՄԻՆԱՍՅԱՆ ԱՇՈՏ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՎԱՀԱԳՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԲԱՐՍԵՂ ՀԵՔՈՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԻՐԻՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Իրինդ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Իրինդ, հեռ՝ 098-34-39-09, irind.aragatsotn@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 32

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ԱՄՍԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 11-րդ կետի պահանջով, համայնքի ավագանին

ՈՐՈՇԵՑ՝

Սահմանել Իրինդ համայնքի ղեկավարի 2020 թվականի ամսեկան դրույքաչափը 196 000 /մեկ հարյուր իննսուն վեց հազար/ ՀՀ դրամ

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀԱՅԿ

ՄԻՆԱՍՅԱՆ ԱՇՈՏ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՎԱՀԱԳՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԲԱՐՍԵՂ ՀԵԲՈՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԻՐԻՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Իրինդ համայնք

ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Իրինդ, հեռ՝ 098-34-39-09, irind.aragatsotn@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 34

### ԻՐԻՆԴ ՀԱՄԱՅՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 18-րդ ենթակետով, հիմք ընդունելով <<Տեղական տուրքերի և տեղական վճարների մասին>> ՀՀ օրենքի 10 և12-րդ հոդվածները համայնքի ավագանին

ՈՐՈՇԵՑ՝

Սահմանել համայնքի տարածքում 2020 թվականի տեղական տուրքերի և տեղական վճարների դրույքաչափերը համաձայն հավելված 1-ի և 2-ի:

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀԱՅԿ

ՄԻՆԱՍՅԱՆ ԱՇՈՏ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՎԱՀԱԳՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԲԱՐՍԵՂ ՀԵԲՈՅԱՆ**

Հավելված 1
ՀՀ Արագածոտնի մարզի Իրինդ
գյուղական համայնքի ավագանու
2019 թ. դեկտեմբերի 12-ի N 34 որոշման

# ԻՐԻՆԴ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2020թ. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության ( տեղադրման) ( բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի )թույլտվության համար՝

**Հիմնական շենքերի և շինությունների համար՝**

ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի , այդ թվում ՝ այգեգործական ( ամառանոցային ) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության շենքերի շինությունների համար՝ 15000 դրամ:

բ ) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար ՝ մինչև 30000 դրամ:

Ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

ա) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 3000 դրամ,

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի , շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման ( բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ՝ քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ 5000 դրամ:

**3. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝**

1) ոգելից և ալկահոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝

-մինչև 26 քառ մետր ընդհ մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 1000 դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար մինչև 26 քառ մետր ընդհանուր մակերես ունեցող՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 1500 դրամ:

Իրինդ համայնքի ղեկավար Բ. Հերոյան

Հավելված 2

ՀՀ Արագածոտնի մարզի Իրինդ համայնքի

ավագանու 2019թ. Դեկտեմբերի 12 -ի N 34 որոշման

Ղեկավարվելով <<Տեղական տուրքերի և տեղական վճարների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 13 կետի, 14 հոդվածի 1-ին մասի 13 կետի և <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 18 կետի պահանջով, Իրինդ համայնքի ավագանին *որոշում է*.

Իրինդ համայնքի համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար 2020 թվականի համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափը /այդ թվում ՀՈԱԿ- ի ծնողական վճարը/ սահմանվել է յուրաքանչյուր ամիս մեկ երեխայի համար 5000 /հինգ հազար/ ՀՀ դրամ գումարի չափով տեղական վճար /փոխհատուցման վճար/:

Ավագանի

1. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀԱՅԿ
2. ՄԻՆԱՍՅԱՆ ԱՇՈՏ
3. ՄՈՒՐԱԴՅԱՆ ՎԱՀԱԳՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Բ. ՀԵՐՈՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԻՐԻՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Իրինդ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Իրինդ, հեռ՝ 098-34-39-09, irind.aragatsotn@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 35

## ԻՐԻՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 19-րդ և 20-րդ ենթակետերով, ՀՀ <<Տեղական տուրքերի և տեղական վճարների մասին>> օրենքի 8-րդ հոդվածի դ/ կետով, ՀՀ <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> օրենքի 8-րդ հոդվածի 7-րդ կետով և 14 հոդվածի պահանջներով, Իրինդ համայնքի ավագանին

ՈՐՈՇԵՑ՝

Սահմանել Իրինդ համայնքում աղբահանությունը կազմակերպելու համար աղբահանության վճարի 2020 թվականի հետևյալ դրույքաչափը՝

1. Կենցաղային աղբի համար բնակվող յուրաքանչյուր բնակչի համար ամսական 100/մեկ հարյուր/ ՀՀ դրամ:

2. Առևտրի հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ շինություններ իրականացնող շինությունների մասով 1 քմ մակերեսի համար 50 /հիսուն/ դրամ:

3. Կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային և նմանատիպ այլ հասարակական շինությունների մասով 1քմ-ի համար 3/երեք/ դրամ

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀԱՅԿ

ՄԻՆԱՍՅԱՆ ԱՇՈՏ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՎԱՀԱԳՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԲԱՐՍԵՂ ՀԵԲՈՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԻՐԻՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Իրինդ համայնք

ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Իրինդ, հեռ՝ 098-34-39-09, irind.aragatsotn@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 37

## ԻՐԻՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ կետով, Իրինդ համայնքի ավագանին

ՈՐՈՇԵՑ՝

Սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծել համաձայն համայնքի ավագանու սահմանված չափորոշիչների՝

1. Սոցիալապես և տնտեսապես անապահով ընտանիքներին 30 000-50 000 հազ. դրամ

2. Միայնակ թոշակառուներին՝ 20 000-40 000 հազ. դրամ

3. Միակողմանի ծնողազուրկ ընտանիքներին՝ 30 000-40 000 հազ. դրամ

4. Երկկողմանի ծնողազուրկ ընտանիքներին՝ 40000-50 000 հազ. դրամ

5. Բազմազավակ /4 և ավել երեխա ունեցող/ ընտանիքներին 40 000-50 000 հազ. դրամ

6. Զինծառայողների ընտանիքներին 20 000- 40 000 հազ. դրամ

7. Տարերային աղետից տուժած կարիքավոր ընտանիքներին /կախված վնասի չափից/ մինչև 50 000 /հիսուն հազար/ դրամ

8. Հաշմանդամության կարգ ունեցող բնակիչներին 50 000-100 000 հազ. դրամ

9. Առողջապահական խնդիրներ ունեցող բնակիչներին /կախված հիվանդության տեսակից/ 80 000-120 000 հազ. դրամ բուժման գնալու նպատակով

10. Բարձրագույն կրթության ոլորտում կարիքավոր ընտանիքների ուսանողներին 100 000- 180 000 հազ. դրամ

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀԱՅԿ

ՄԻՆԱՍՅԱՆ ԱՇՈՏ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՎԱՀԱԳՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԲԱՐՍԵՂ ՀԵԲՈՅԱՆ**